ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1578

14.09.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի ՁՊՎ և արձանագրվել էին մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Բուժսենյակում սպիտակեղեն չկար, իսկ բժշկական սավանը կեղտոտ էր՝ ինչպես նախորդ այցելության ընթացքում:
2. Ընդհանուր բուժսենյակում, հակահիգիենիկ վիճակ էր, կեղտոտ, թափթփված, քանի որ համատեղված էր հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ:
3. Սանհանգույցում զուգարանակոնքը կոտրված էր, իսկ զուգարանակոնքի ջրսիֆոնային տարրայից ջուրը անընդմեջ հոսում էր:
4. Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր շատ փոշոտ վիճակում:

ՀՀ ոստիկանության ՀՇՄ
մուտք № 4268
18.09.2015թ.

ՀՀ ոստիկանության ՀՇՄ
6170
17.09.15

Խախտումներ՝

1. Դիտորդական խմբի այցելության նախորդ օրը ՁՊՎ-ում կազմակերպվել էր տեսակցություն Ա. Պետրոսյանի և նրա հարազատների հետ: Տեսակցության սենյակը ուսումնասիրելուց կարելի է հստակ ասել, որ վերջին երկու ամիսը դուռը չէր բացվել, անգամ մաքրություն արված չէր, քանի որ փոշու մեջ էր: Միանշանակ կարող ենք պնդել, որ տեսակցությունը համապատասխան սենյակում չէր կազմակերպվել:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

2. Դիտորդական խումբը 25.05.2015թ-ին թիվ 2621/1543 գրությամբ դիմել էր Ձեզ և տեղեկացրել, որ դատաքննության նպատակով, կալանավորված անձանց ՁՊՎ են ընդունում գրությունների հիման վրա՝ օրենքի պահանջը անտեսելով: Միաժամանակ մենք տեղեկացրել էինք, որ խնդրի վերաբերյալ մենք դիմել ենք ՀՀ ԱՆ Դատական դեպարտամենտ և միաժամանակ խնդրել էինք Ձեզ, տվյալ օրենքի պահանջը կարգավորել՝ մինչ վերջնական պատասխան լինելը:

Բայց արդեն 4 ամսից ավել է, նշված հարցը ոչ մի կերպ չի կարգավորվել Ձեր կողմից: Ավելին՝ ներկայիս պահին նաև ՀՀ Քննչական կոմիտեի քննիչներն էլ որոշումներ չեն տրամադրում:

Արդյունքում՝ կալանավորված անձի դատաքննությանը, քննչական գործողություններին և այլ գործողություններին մասնակցելու նպատակով՝ ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի ՁՊՎ են ընդունվում և պահվում ապօրինի:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

**Հարգանքով՝**

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3455 <<13>> 10 2015թ.

Ձեր 14.09.2015թ. թիվ 2621/1578 գր.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված փաստերն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Վայոց Ձորի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

**Թերություններ.**

**1.** Դիտորդների խմբի այցելության պահին ՁՊՎ-ի բժշկական սենյակի մահճակալին սպիտակեղեն փռված չի եղել, քանի որ նախորդ այցելության ժամանակ խմբի անդամների կողմից առաջարկվել էր դրանք փաթեթավորել պոլիէթիլենային տոպրակների մեջ և հանել միայն անհրաժեշտության դեպքում, իսկ բժշկական սավանը ամբողջությամբ նոր վիճակում դրված է եղել պահարանի մեջ, որը ՁՊՎ-ի վարչակազմի կողմից ցուցադրվել է դիտորդների խմբի անդամներին:

**2.** Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի շենքային պայմաններից ելնելով՝ ՁՊՎ-ի բժշկական և ոստիկանի հանգստի սենյակները համատեղված են և դիտորդների խմբի այցելության ժամանակ սենյակը եղել է մաքուր ու հավաքված վիճակում:

**3.** ՁՊՎ-ի սանհանգույցի զուգարանակոնքը կոտրվել է դիտորդների խմբի այցելությունից մի քանի օր առաջ և հնարավոր չի եղել այն վերանորոգել՝ ՁՊՎ-ում անձինք պահելու պատճառով, իսկ զուգարանակոնքի ջրահեռացման տարայի ջուրը բացվել է ՁՊՎ վարչակազմի կողմից՝ հակահիգիենիկ պայմաններից խուսափելու համար:

**4.** Դիտորդների խմբի այցելության ժամանակ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ-ն գտնվել է մաքուր վիճակում

**Խախտումներ.**

**1.** Ձերբակալված Ա.Պետրոսյանին ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում սահմանված կարգով թույլատրվել է տեսակցել իր հարազատների հետ՝ դիտորդների խմբի այցելությունից մեկ օր առաջ: Տեսակցությունը կազմակերպվել է ՁՊՎ-ում պահվող անձանց համար նախատեսված տեսակցության սենյակում, որը դիտորդների խմբի այցելության ժամանակ եղել է մաքուր:

2015թ. 9-ը ամիսների ընթացքում ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ-ում տրամադրվել են թվով 26 տեսակցություններ, որոնք կազմակերպվել են ՁՊՎ-ի տեսակցությունների սենյակում:

**2.** Հաշվետվության 2-րդ կետով նշված խախտման վերաբերյալ հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության շտաբը համապատասխան գրություն է հասցեագրել ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին՝ դատական ատյանների կողմից <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները չպահպանելու մասին: Ներկայումս այդ հարցը գտնվում է քննարկման փուլում, իսկ ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ քննիչներն էլ որոշումներ չեն տրամադրում, ապա խնդրվում է նման դեպքերը ներկայացնել փաստերով և ըստ կոնկրետ ստորաբաժանումների՝ ՀՀ Քննչական կոմիտե ներկայացնելու համար:

**ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ**